ԿՅԱՆՔԸ ԻՆԴՈՆԵԶԻԱՅԻ ՀԱՅ ԴԱՂՈՒԹՈՒՄ

Կիրակի, դեկտեմբերի 14-ին, տեղվույս պատվարժան վարչության նախաձեռնությամբ, տեղի ունեցավ Ս. Գեորգ եկեղեցու հիմնադրության 25-ամյակի առթիվ հանդիսավոր տոնակատարություն։

Տեղական մամուլի միջոցով հրավիրված էին տեղիս կրոնական հաստատությունների պաշտոնյաները և մի շարք երևելի անձնավորություններ։

Հակառակ շաբաթներից ի վեր հորիզոնի վրա կուտակված մառախլապատ ամպերի ու անընդհատ տեղացող անձրևին, այդ օրը Սուրաբայայի գեղածիծաղ առավոտներից մեկն էր. երկնակամարի վրայից բոլորովին չքացել ու անհետացել էին գորշ ամպերը, երկինքը ջինջ ու կապույտ էր, արեգակը փայլում էր սովորականից ավելի պայծառ ու գեղեցիկ։ Թե՛ եկեղեցու բակում և թե՛ դիմացի փողոցներում նշմարվում էր արտակարգ եռուզեռ։ Հայ համայնքն ու հրավիրյալները անուշաբույր ծաղկեփնջեր ձեռներին, փութացել էին ժամանակից առաջ տեղ գրավելու Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու մեջ։

Նշանակված ժամին եկեղեցու զանգակների անուշ զողանջումով և «Խորհուրդ խորին» քաղցր մեղեդիով սկսվեց սուրբ պատարագը։ Թե՛ քահանան և թե՛ երգեցիկ խումբը գեղեցիկ ներդաշնակությամբ կատարեցին սուրբ պատարագի զմայլեցուցիչ արարողությունը։ «Կատարումն օրինաց»ից հետո տեղի ունեցավ գոհաբանական մաղթանք՝ վասն հաստատության և անսասանության Մայր Աթոռս Սրբո Էջմիածնի և արժանավոր Գահակալ Նորին Վեհափառ Հայրապետի Ամենայն Հայոց Տ. Տ. Գեորգ Զ. Սրբազնագույն Կաթողիկոսի արևշատության ու անգորրության։ Երգեցիկ խումբը բարձր տրամադրությամբ երգեց «Հրաշափառ» և «Էջ Միածինն» շարականները, որից հետո Ինդոնեզիայի հայոց հոգևոր հովիվ արժանապատիվ տեր Արիստակես քահանա Միրզայանը օրվա նշանակության մասին խոսեց շատ իմաստալից ու հոգեշունչ մի քարոզ, բնաբան ունենալով «Եկայք, շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»։ Նա վերջում կոչ արեց հայ համայնքին՝ ավելի սերտորեն կապվել Հայ Եկեղեցուն և հավատարիմ մնալ նրա սրբազան խորհուրդներին, սրբություններին ու ավանդություններին, սիրել հայ մշակույթը, հայ լեզուն, հայ դիրն ու գրականությունը, որոնց շնորհիվ կարելի կլինի պահպանել ազգային ինքնուրույնությունը դաղթաշխարհի մեջ։

Ուրարակիր պ. Եղրաս Տեր-Գրիգորյանը պարզեց հյուրերին Հայ Եկեղեցու ծագումն ու զարգացումը և ազգային ու քաղաքական մարզերում նրա կատարած դերը։ Նույն միջոցին ստացվեցին ու կարդացվեցին Ջակարտայի Կենտրոնական հարգելի վարչության, Նոր-Ջուղայի պատկառելի Կրոնական խորհրդի և արժանապատիվ տեր Վարդան ավագ քահանա Ս. Վարդանյանի շնորհավորական հեռագրերը։ Կրոնական խորհուրդը միևնույն ժամանակ ուրարակրության արտոնություն շնորհած էր պ. Խաչատուր Խ. Դավթյանին իր ազգանվեր ծառայության համար։

Քահանայի «Պահպանիչ» աղոթքով եկեղեցին վերջացավ և ժողովուրդը թողեց եկեղեցին հոգեկան բարձր տրամադրության մեջ։

(Կալկաթա, «ՆՈՐ ԱԶԴԱՐԱՐ»)

«ՖՐԻԿԻ ԴԻՎԱՆԸ»

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հրատարակությամբ լույս է տեսել 13-րդ դարի նշանավոր հայ տաղերգու Ֆրիկի տաղերի ժողովածուն՝ «Ֆրիկի դիվան» խորագրով։ Ժողովածուն կազմել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ծերունի միաբան դերաշնորհ Տիրան արքեպիսկոպոսը, նրա վրա աշխատելով ավելի քան երկու տասնամյակ։

Ժողովածուն 755 մեծադիր էջերից բաղկացած հատոր է։ Նրա մեջ մտնում են Ֆրիկի 51 տաղերը՝ իրենց տարբերակներով։ Հատորում զետեղված է հրատարակչի արժեքավոր ուսումնասիրությունը՝ Ֆրիկի անձնավորության, երկրի, նրա ապրած ժամանակաշրջանի, միջավայրի պայմանների, հետագայի տաղերգուների վրա թողած ազդեցության մասին և այլն։ Ժողովածուի վերջում տրված է Ֆրիկի բառարանը՝ իր լուսաբանություններով։